ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՄԻ ՎԱՐԿԱԾԻ ՎԵՐԱՊՐՈՒԿ ԵՎ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԹՎԱԿԱՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մաշտոցը գնում է «Արամի կողմերը» Վռամշապուհի հինգերորդ տարում՝ «ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց»։ Այնտեղ հանդիպում է Եդեսիայի Բարիլաս և Ամիդի Ակակիոս եպիսկոպոսներին և նորագյուտ այբուբենով վերադառնում Վռամշապուհի վեցերորդ տարում՝ «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց»։ Այդպես է ներկայացնում Կորյունը։ Իսկ գրքի վերջում նա բերում է ժամանակագրական համադրումներ, ուր ուղղակի ասված է. «Եւ ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն ամք երեսուն և հինգ»։ «Եւ դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»[1]։

Բանասերները գյուտի տարեթիվը որոշում են այս տվյալներով, և ժամանակագրական պարագիծը մեծ չէ՝ 402-ից 408, V դարի առաջին տասնամյակ։ Ադոնցը դուրս է գալիս այդ շրջանակից։ Նա գյուտը տեղադրում է 383—392 թթ. միջև։

Ադոնցը գտնում է, որ Մաշտոցը չէր կարող V դարի առաջին տասնամյակին հանդիպել Եդեսիայի Բաբիլաս եպիսկոպոսին, քանի որ այդ շրջանում Բաբիլաս եպիսկոպոս չի հիշվում։ Կա Ռաբուլաս, որ եպիսկոպոսական աթոռ է բարձրացել 412 թ., իսկ Ակակիոսը Ամիդի եպիսկոպոս է կարգվել 420 թ.։

«Եթե Մաշթոց Ամիդում ներկայացել է Ակակին և Եդեսիայում՝ Ռաբուլին, այդ կարող էր լինել 420-ից ոչ առաջ և ոչ ուշ քան 435,— գրում է Ադոնցը։—Եվ եթե իրավ այդ ճանապարհորդության հետ է կապված տառերի գյուտը, ակներև է, որ նա չէր կարող տեղի ունենալ Հաղկերտի ութերորդ տարին—ժամանակական անհեթեթություն»[2]։

Եվ Ադոնցը այդ ճանապարհորդության հետ չի կապում։ Նա գտնում է Մաշտոցին բարեկամ ուրիշ եպիսկոպոս՝ Թեոդոր Մոպսուեստացի և գրերի գյուտը փոխադրում է առաջ։

Ն. Ադոնցին միանում է Հ. Մանանդյանը. «Ադոնցի դիտողությունները, անշուշտ, խիստ հետաքրքրական են և արժանի են հատուկ ուշադրության»[3],— գրում է նա և ընդունում, որ մաշտոցյան գիրը եղել է իրոք Թեոդոր Մոպսուեստացու քահանայության ժամանակ։ Մանանդյանը գնում է հետագա ճշման՝ 391—2 թ.։

Շատ ջանքեր պետք չէին, որպեսզի բանասիրությունը մերժեր Ադոնց-Մանանդյան վարկածը, որ հենված էր պարզ թյուրիմացության վրա։ Ադոնցը վկայաբերում է արտաքին աղբյուրները՝ «Արտաքին աղբյուրներից քաջահայտ է»։ Բայց արտաքին աղբյուրներից քաջահայտ է, որ Ակակիոսը Ամիդի եպիսկոպոս է կարգվել ոչ թե 419/20, այլ 400 թ., իսկ Բարիլասը (Բաքի-

---

1 Կորյուն. Վարք Մաշտոցի. Երևան. 1941, էջ 98, 100։

2 Մեսրոպ Մաշտոց (հոդվածների ժողովածու). Երևան, 1962, էջ 223։

3 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երևան, 1957. հ. Բ, էջ 264։

դաս) Եդեսիայի աթոռին նստեց 399 թ. և նրա եպիսկոպոսության շրջանն ավարտվում է 409-ին[4]։ Ոչ մի ժամանակական անհեթեթություն։

Թվում է խնդիրը փակվեց, Ադոնց—Մանանդյան վարկածը զուրկ է հիմքից։ Բայց ահա անսպասելիորեն հանդես է գալիս Բ. Ուլուբաբյանը և այդ անհիմնության վրա հիմնում իր կառույցը[5]։

Ուլուբաբյանը ոչ մի խոսք չի ասում «հակասության» մասին, որ իբր գոյություն ունի Կորյունի բնագրի և նրա ժամանակագրական վերջաբանի միջև, բայց այդ «հակասությունից» բխող Ադոնցի և Մանանդյանի եզրակացությունները ընդունում է իբրև ելակետ, որ Կորյունի ժամանակագրական վերջաբանը անվավեր է, և գյուտի թվագրման համար պետք է առաջնորդվել Կորյունի բնագրի և Ղազար Փարպեցու տվյալներով։ Բ. Ուլուբաբյանը գյուտի թվականը սահմանում է 393 թ.։ «Զրուցարանի» հեղինակն իր բոլոր փաստարկները բացառապես վերցնում է Հ. Մանանդյանից, որոնք սակայն հետագայում հերքվել են, կամ որոնցից հրաժարվել է ինքը՝ Մանանդյանը։

Այսպես։ Հ. Մանանդյանը մերժում էր Կորյունի ժամանակագրական վերջաբանը, գտնելով, որ այն ընդմիջարկություն է և չի կարող վերագրվել իրեն Կորյունին, բայց հետո հրաժարվում է իր տեսակետից։

Այդ հանգամանքը ցավով է նշում Բ. Ուլուբաբյանը. «Դժբախտաբար,— գրում է նա,— Հ. Մանանդյանը հետևողական չեղավ իր այս տեսակետի մեջ և հետագայի մի ուսումնասիրությամբ փորձեց Կորյունի գրքին կպած ժամանակագրությանը տալ բարեպատեհ տեսք[6], կամ՝ «ինչ որ առաջ համարվում էր ընդմիջարկություն և չէր կարող վերագրվել Կորյունին, հիմա դառնում է Կորյունինը»[7]։ Ոչ թե դժբախտաբար, այլ տրամաբանաբար։ Եթե չկա հակասությունը, չկա և հետևությունը։

Նկատենք, որ Ն. Ադոնցը նույնպես հետագայում հրաժարվեց իր տեսությունից, գտնելով, որ «Մաշտոցի հետազոտությունները՝ հայ այբուբեն ստեղծելու համար 392-ին սկսված՝ ավարտեցան 405-ին»[8]։

405 թ., ուրեմն ընդունվում է ժամանակագրական վերջաբանը։ Այդ թվականը կարելի է ստանալ ժամանակագրական վերջաբանի միջոցով։ Եվ երբ Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը «հետևողական» չեղան, «Զրուցարանի» հեղինակը փորձում է «հետևողական» լինել և շարունակում է հենվել լքված փաստարկներին։

«Կորյունի գրքի վերջի ժամանակագրության հետագա ընդմիջարկություն լինելն ապացուցելու համար Հ. Մանանդյանը սկզբնապես վկայակոչում էր...»[9], «Հ. Մանանդյանը վկայակոչում էր նաև...»[10], «գիտնականը գտնում էր...»[11], «Մանանդյանը վկայակոչում էր նաև»[12],—այդպես են ըս-

---

[4] Synodicon Orientale ou recue'l de sinodes Nestoriens. publie, traduit et annote par J. B Chabot. Paris, MDCCCII (1902). p. 255, 276: Ն. Ակինյան. Ս. Մաշտոց Վարդապետ. Վիեննա, 1949, էջ 111—112։ Ա. Աբրահամյան. Հայ գրի ստեղծման տարեթիվը.—Մեսրոպ Մաշտոց (ժողովածու), Երևան, 1963, էջ 118—120։ Ե. Տեր-Մինասյան. Հայոց գրերի գյուտի թվականը և այլ հարակից խնդիրների մասին.—«Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 26—30։ Հ. Թորոսյան. Քանի մի խնդրա կան կետեր Կորյունի գրքին մեջ.—«Բազմավեպ». 1932, էջ 259—260։

[5] «Սովետական հրականություն». 1981, № 8, էջ 149—155, նույնը՝ «Սովետական Հայաստան», 1983, № 5, էջ 26—29 և Բագրատ Ուլուբաբյան. Զրուցարան. Երևան, 1986, հ. Բ, էջ 91—106։

[6] Զրուցարան, էջ 97։

[7] Նույն տեղում, էջ 99։

[8] Ն. Ադոնց. Հայացած Աստվածաշունչը և անոր պատմական տարողությունը.— «Անահիտ», Օարիզ, 1926, № 3, էջ 16։

[9] Զրուցարան, էջ 100։

[10] Նույն տեղում, էջ 102։

[11] Նույն տեղում, էջ 97։

[12] Նույն տեղում։

կրսվում հեղինակի պարբերությունները. և այդպես են վկայակոչվում վկայակոչումները։ Իսկ ինչ է վկայակոչում ինքը՝ «Զրուցարանի» հեղինակը։ Նա գրում է. «Մաշտոցյան Մատենադարանում պահվող կորյունյան ձեռագրերից միայն երեքը կարող են հպարտանալ իրենց հնությամբ. երկուսը XIV դարից են, մեկը (№ 3791)՝ XV-ից։ Այս երեքից ոչ մեկում ոչ ժամանակագրություն կա, ոչ էլ նրա հետքը»[13]։

Նա բերում է «Մատենադարանում պահվող կորյունյան ձեռագրերի» կամ «Կորյունի երկի բուն ձեռագրերի» համարները իրենց էջերով. ձեռագիր № 3787, էջ 116բ—120բ, № 3791, էջ 195բ—201բ և №3797[14]։

Պահանջենք ձեռագրերը և թերթենք էջերը, և որքան էլ տարօրինակ է, դրանք «կորյունյան ձեռագրեր» չեն կամ «Կորյունի երկի բուն ձեռագրեր, որոնք կարող են հպարտանալ իրենց հնությամբ», այլ հայսմավուրք և ճառընտիր։ Հայսմավուրք՝ միջնադարյան օրացույց, որի մեջ յուրաքանչյուր օրվա տակ նշված է եկեղեցու հետ կապված որևէ տոն կամ հիշատակություն։ Ձեռագիր № 3787, Մեհեկի ԺԳ-ն վերաբերում է Մաշտոցին. «Ի յիշատակի սրբոյն Մեսրովպայ վարդապետի, զոր ասացեալ է Կորեան սրբոյ յաղագս վարուց նորա թէ ուստ էր», փոքրիկ մի բնագիր, որ կենսագրական տեղեկություններ է պարունակում։ Սկզբի հատվածը, մինչև Մաշտոցի Ասորիք գնալը, համապատասխանում է Կորյունին՝ նկատելի տարբերություններով։ Իսկ Ասորիքից վերադառնալուց հետո Մաշտոցի կրոնական վարքն է։ Չկա առաջաբանությունը, որ այնքան մեծ տեղ է գրավում Կորյունի մոտ, չկա՝ որ Մաշտոցը գնում է Հայաստանի արևմտյան հատվածը, որ վրաց և աղվանից համար գիր է ստեղծում, իսկ 106բ էջից բնագիրը բոլորովին հեռանում է և զուտ կրոնաբարոյական նյութեր են. «Անդ էր ապա չարբենալ գինով» և այլն և Կորյունի հետ ոչ մի կապ չունեն։ Այնուհետև գալիս է մի այլ հատված (107ա—108ա)՝ «Եւ վասն մահուան սրբոյն Մեսրովպայ», որ քաղված է Խորենացուց,— «Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց...»։ Դա պարզապես սրբի վարք է, քաղածո, հավուր պատշաճի և ոչ թե գրերի գյուտի և նրա ստեղծողի պատմությունը։

Ձեռագիր № 3797-ը լիովին համապատասխանում է ձեռագիր № 3787-ին։ Մեհեկի ԺԳ օրվա տակ նույն նյութն է, ավելի գրագետ գրչությամբ։ Ընդօրինակված են իրարից կամ մեկ նախամորից։

Ձեռագիր № 3791-ում մեզ հետաքրքրող բնագրի վերտառությունն է՝ «Յիշատակարան պատմութեան երանելոյն սրբոյն վարդապետի Մեսրոպայ, զոր արարեալ է նորին աշակերտին՝ Կորեան»։ Սկսվում է ինչպես Կորյունի մոտ՝ «Ազգանազեան ազգին և զՀայաստան աշխարհին», բայց բովանդակությունը զուգահեռ է գնում Խորենացուն։ Պատմում է, թե ինչպես Մեսրոպը գնաց Դանիելի մոտ, ոչինչ չստացվեց և գիր հորինեց ոչ ի քուն երազ և այլն. կամ՝ «ստեղծ զնշանագիրսն մեր հանդերձ Ռոփանոսի՝ աշակերտի Եսիփանու»։ Ամբողջ գործը ծաղկաքաղ է, հիմնականում՝ Խորենացուց։

Մնում է զարմանալ, ինչպե՞ս կարելի է դրանք համարել կորյունյան ձեռագիր, մի՞թե զեղծում է դա։ Թերևս վերնագրերն են շփոթի մեջ գցել։ Ինչևէ, եթե այդ սահմաններում պատկերացնենք Կորյունի բնագիրը...

«Բայց գուցե ավելի հին ձեռագրերում այն գոյություն է ունեցել և վերականգնվել է նորադույնների՞ մեջ, որոնք XVII—XVIII դարերից են,— շարունակում է «Զրուցարանի» հեղինակը,—Մատենադարանում հիշյալ ձեռագրերից առավել հինը չկա, որ Կորյունի երկն ունենա։ Ուրիշ ձեռագրատներում էլ չեն գտնվել այդպիսիք։ Միայն մեկը, որ պահվում է Փարիզի ազգային գրադարանում և համարվում է «ընտիր և հարազատագոյն օրինակ մի պատ-

---

13 Նույն տեղում, էջ 102—103։

14 № 3797 ձեռագրի էջը «Զրուցարանում» և «Սովետական Հայաստանում» չի նշված։ № 3787 ձեռագրի էջերը «Սովետական Հայաստանում» և «Զրուցարանում» ճիշտ չեն՝ 116բ—120բ։ Պետք է լինի՝ 104ա—107ա և 107ա—108ա

մութեան Կորեան՝ ի ստուար և հնագիր՝ ԺԲ դարու ճառընտիրի...» (Կորիւն, Պատմութիւն..., Վենետիկ, 1894, էջ 6), Վենետիկի Մխիթարյաններն են հրատարակել անցյալ դարի կեսին (տե՛ս «Սոփերք հայկականք», հտ. 11, Վենետիկ, 1854)։ Այս «ընտիր և հարազատագոյն» ձեռագրում ևս ժամանակագրությունից ոչինչ չկա»[15]։

Չես հասկանում, ինչի՞ համար է այդ անգիտացումը։ Ինչու՞ պիտի այդտեղ ժամանակագրությունից որևէ բան լինի։ Բնագիրը Կորյուն չէ։ Այն ստեղծվել է շատ ավելի ուշ, Կորյունի և Խորենացու բանաքաղությամբ և կոչվում է Սուտ Կորյուն։ Դա այնքան հայտնի է բոլորին՝ ով մոտ է բանասիրությանը և ով մոտ չէ բանասիրությանը։ «Ընտիր և հարազատագոյն»,— այդպես կարող էին ասել բնագրի հրատարակիչները 1894 թ.։ Բայց 1894 թ. շատ ժամանակ է անցել և այսօր նրանցից քաղվածք բերել ներկա եղանակով՝ «Համարվում է «ընտիր և հարազատագոյն օրինակ մի պատմութեան Կորեան», նշանակում է... դժվար է ասել ինչ է նշանակում։ Մ. Աբեղյանը իր համեմատական բնագրի աղբյուրների ցանկում «Ս» պայմանանիշի տակ գրում է. «Սուտ-Կորիւն. Տպված է Վենետիկի 1894 թ. և Թիֆլիսի 1913 թ. հրատարակությունների հետ։ Քանի որ դրա մեջ ամբողջ հատվածներ կան Կորյունից առնված, բնականաբար որոշ դեպքերում պիտանի է Կորյունի բնագրի մեջ եղած աղճատումներն ուղղելու համար։ Օգտագործել եմ սակավաթիվ դեպքերում»[18]։

Հատվածներ կան Կորյունից առնված և ոչ թե հատված է պակաս Կորյունից։

«Զրուցարանի» հեղինակը «Մանանդյանը վկայակոչում էր» շարքից բերում է Մատենադարանի տոմարական բնագրեր պարունակող երեք ձեռագիր՝ № 1495, 8575 և 6644, «որոնցում հայերեն գրերի գյուտի տարի է նշվում 391—392 թվականը»[17]։

Երեք ձեռագրերն էլ բերված են թյուրիմացաբար և հիմք չեն տալիս հաստատելու, որ գրերի գյուտը տեղի է ունեցել 391—392 թ.։ Դա արդեն դիտված է և հարկ չկա վերստին կանգ առնել այդ հարցի վրա[18]։ Ուղղակի հպանցիկ ասենք, որ № 1495 ձեռագիրը տալիս է նման թվական, բայց այնպիսի մի ցանկում, ուր բոլոր տվյալները կա՛մ սխալ են, կա՛մ ունեն առասպելական բնույթ և անկարելի է հավաստիանալ, թե այդ մեկը ճիշտ է։ № 6644 ձեռագիրը գյուտի թվականի մասին ժամանակագրական նշում առհասարակ չունի, իսկ № 8575 ձեռագրի համաձայն գյուտը ընկնում է ոչ թե 391—392-ին, այլ՝ 429-ին։ Այդ երեք ձեռագրերը նորից վկայակոչել իբրև փաստարկ առնվազն տարօրինակ է։ «Զրուցարանի» հեղինակը, սակայն, ավելացնում է չորրորդը՝ ձեռագիր № 1532։

Որտեղից՞ է այս չորրորդը։ Թերևս Ուլուբաբյանը սեփական հետազոտությամբ նոր և ճիշտ աղբյուր է գտել։ Բայց Մատենադարանի № 1532 ձեռագիրը ոչ մի տոմարական բնագիր չունի։ Այստեղ պարզ թյուրիմացություն կա։ «Զրուցարանի» հեղինակը № 6644 ձեռագրի տարեթիվը՝ 1532, Մանանդյանից արտագրել է որպես առանձին ձեռագրական միավոր[19]։

Տարեթիվը շփոթել ձեռագրական միավորի հետ, անշուշտ, վրիպում է։ Բայց հեղինակը քննում է մի այնպիսի բանասիրական խնդիր, ինչպիսին է

---

15 Զրուցարան, էջ 103։

16 Կորյուն, էջ 21

17 Զրուցարան, էջ 97։

18 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան. Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, էջ 34—38։ Նույնի՝ Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 438—443։ Ա. Աբրահամյան. Հայ գրի ստեղծման տարեթիվը, էջ 111—114։

19 Տե՛ս Հ. Մանանդյան. Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը. Մեսրոպ Մաշտոց (ժողովածու), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 85։

հայոց գրերի գյուտի թվականը և չի փորձում հավաստիանալ աղբյուրների մեջ։ Գոնե արտագրելիս ուշադիր լիներ։

«Զրուցարանի» հեղինակն իր աշխատանքը կոչում է քննական պրպտում։ Մի՞թե այդպես է լինում քննական պրպտումը։

Մի ուրիշ օրինակ. «Գրքի մեզ հասած բնագրի բուն շարադրանքի տեղեկությունները սրանք են»,— գրում է «Զրուցարանի» հեղինակը։ Նա նկատի ունի Կորյունի «Վարք Մաշտոցին» և ա և բ կետերով բերում է «բուն շարադրանքի տեղեկությունները»։ Ահա բ կետը. «Երկու ամիս (թե՞ երկու տարի) ապարդյուն գործածվելուց հետո մերժվել են Դանիելյան գրերը, որովհետև պարզվել է, որ նրանք, լինելով ընդամենը 22 տառ, պակասավոր են»[20]։

Բայց Կորյունի բնագրում ոչ մի տեղ չի ասված, որ դանիելյան գրերը 22 տառ ունեին։ Ինչպե՞ս կարելի է հորինվածք թույլ տալ և աղբյուրին վերագրել այն, ինչ նա չունի։ Դժվար է մտածել, որ Բ. Ուլուբաբյանը Կորյունի բնագիրը չի կարդացել։ Կորյունը չի էլ ասում, թե տառերը պակասավոր էին։ Դա գալիս է գրաբարի թյուր ըմբռնումից։ «Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն...»,—«չեն բաւական» պետք է թարգմանել ոչ թե բավարար չեն, պակասավոր են, այլ՝ անբավական են, անկարող, անօգտակար, ոչ պիտանի՝ գրաբարյան ճիշտ իմաստով։

Կորյունի ժամանակագրական վերջաբանում ասված է, որ Մաշտոցը վախճանվել է Հազկերտ II-ի առաջին տարում։ Իսկ Թ. Նյոլդեքեի համաձայն Հազկերտի գահակալության առաջին տարին համապատասխանում է 438 կամ 439 թ.։ «Զրուցարանի» հեղինակն այստեղ հակասություն է տեսնում։ «Մաշտոցը վախճանվել է 440 թ. փետրվարի 17-ին,—գրում է նա,—ուրեմն Հազկերտ Բ-ի երկրորդ կամ երրորդ տարում և ոչ առաջին, ինչպես նշում է ժամանակագիրը»։

Զրուցագիրն ուզում է ասել, որ սխալ է ժամանակագրությունը, բայց այդտեղ սխալ չկա։

Նախ՝ Կորյունը ասում է, որ Մաշտոցը վախճանվեց Հազկերտ II-ի առաջին տարում՝ «Յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի», նա չի ասում՝ 440 թ. փետրվարի 17-ին։ Այդ թիվը որոշում է Դյուլորիեն, իսկ Հազկերտ II-ի առաջին տարին՝ 438/9 արտածում է Նյոլդեքեն, և եթե անհամաձայնություն կա, անհամաձայնությունը Դյուլորիեի և Նյոլդեքեի տվյալների միջև է և ոչ թե Կորյունի հաղորդման, մանավանդ պարզ չէ Հազկերտի թագավորության առաջին տարին 438 է, թե 439։ Եթե այդպես է, հնարավոր է և՝ 440։ Զրուցագիրը կարող էր Կորյունի ժամանակագրական տվյալը համարել անճիշտ, եթե վստահ լիներ, որ ճիշտ է նրա տոմարական արտահայտությունը և պետք էր հավաստիանալ այդ խնդրում։ Բայց հեղինակը հենց այնպես վերցրել է պատրաստի թվեր և նրանց միջև տեսել հակասություն։

Բայց, որքան էլ անսպասելի, հենց այնպես էլ այդ թվերի միջև ոչ մի հակասություն չկա։

Պարսից մոտ տարին սկսվում է Նավասարդից, և թագավորների գահակալությունը հաշվվում տարեսկզբից, երբ էլ որ այն եղած լինի։ Նյոլդեքեն Հազկերտ II-ի գահակալության համար երկու թիվ է նշում, որովհետև պարզ չէ՝ այն 438-ի, թե 439-ի Նավասարդին է համընկնում։ Այստեղ մեզ օգնության է գալիս Կորյունի մի տվյալ պատումի մեջ և ոչ թե ժամանակագրական վերջաբանում՝ Սահակ Պարթևի մահվան ժամանակը. «Յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ... ի կատարեալ ամսեանն Նավասարդի»—երկրորդ Հազկերտի առաջին տարին, Նավասարդ ամսի վերջին։

436-ից մինչև 439 թ. Նավասարդի մեկը հայոց տոմարում համընկնում է օգոստոսի 9-ին, իսկ 30-ն անում է սեպտեմբերի 7-ը։ Վարդան Արևելցու մի ուրիշ տեղեկություն բերում է հետագա ճշտման։ Վարդանը գրում է, որ Սահակ Պարթևի մահվան օրը հինգշաբթի էր։ Դյուլորիեն նկատի ունենալով

---

[20] Զրուցարան, էջ 91։

նախապես «Սոփերքում» հրատարակված այս տվյալը, որոշում է Սահակ Պարթևի մահվան տարին՝ 439, քանի որ 436-ից 439 թթ. միջև 439 թ. սեպտեմբերի 7-ն է հինգշաբթի։ Կորյունը, դարձյալ պատումի մեջ, ասում է, որ Մաշտոցը մահացավ Սահակից վեց ամիս հետո, մահեկան ամսի 13-ին՝ «յետ ամսոյ վեցից անցելոց... յերեքտասներորդում ամսեանն մեհեկանի»։ Եթե Սահակը մեռել է 439 թ. սեպտեմբերի 7-ին, ապա նրանից վեց ամիս հետո մեհեկանի 13-ն ընկնում է 440 թ. փետրվարի 17-ին։

Այսպիսով, քանի որ Սահակ Պարթևը վախճանվել է Հազկերտի առաջին տարում, ապա ուրեմն Հազկերտի առաջին տարին 439-ն է և այն ձգվում է 439-ի օգոստոսից մինչև 440 թ. օգոստոսը, իսկ Մաշտոցը մեռել է 440 թ. փետրվարին՝ Հազկերտի առաջին տարում։

Ինչպես տեսնում ենք «Զրուցարանի» հեղինակի բերած փաստարկն անիմաստ է, և ժամանակագրական տվյալները հաստատում են, որ Կորյունի բնագրի և վերջաբանի միջև հակասություն չկա։

Իսկ «քննական պրպտո՞ւմը»...

Մերժելով Կորյունի վերջաբանը «Զրուցարանի» հեղինակը առաջարկում է Մաշտոցի գյուտի ժամանակը որոշել Վռամշապուհի հինգերորդ տարով, իսկ նրա առաջին տարվա համար իբրև լուծման բանալի ընդունել Ղազար Փարպեցու ժամանակագրական տեղեկությունը։

Վռամշապուհի հինգերորդը՝ լավ, բայց տեսնենք, թե ինչ է ներկայացնում իրենից Ղազար Փարպեցու ժամանակագրական տեղեկությունը։

Ղազար Փարպեցին գրում է, որ Հայաստանի բաժանումից հետո պարսից Շապուհ արքան նախարարների խնդրանքով թագավոր է կարգում Խոսրովին. «Եւ արքայն Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն, յազգէն Արշակունեաց»։ Որոշ ժամանակ անց՝ «յետ ժամանակի ինչ անցելոյ», Շապուհը գահազուրկ է անում նրան և նշանակում Վռամշապուհին։ Փարպեցին ապա պատմում է գրերի գյուտի, Սահակի և Մաշտոցի գործունեության, Աստվածաշնչի թարգմանության մասին, նկատելով, որ այդ ամենը կատարվեց Վռամշապուհի ժամանակ։ Այնուհետև Վռամշապուհը դեռ երկար թագավորում է և մեռնում խոր ծերության մեջ. «Եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս բազումս,—որոշ ձեռագրերում, ինչպես և Խորենացու մոտ՝ ամս քսան և մի,—և հասեալ ի յերկար ծերութեան վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգստիւ յաշխարհիս Հայոց»։ Վռամշապուհից հետո մեռնում է Շապուհը. «Յետ այսորիկ մեռաւ և Շապուհ արքայն Պարսից և թագաւորեաց Վռամ որդի նորա, որ էր Կրման արքայ»[21]։

Այսպես։ Շապուհը թագադրել է Խոսրովին, ապա՝ Վռամշապուհին, անցել է ամս բազումս կամ 21 տարի, Վռամշապուհը մեռել է խոր ծերության մեջ և ապա նոր ավարտվել է Շապուհի գահակալության շրջանը, որ սակայն իշխել է հինգ տարի։

«Դուրս է գալիս կատարյալ անհեթեթություն»,—գրում է Ե. Տեր-Մինասյանը[22], «Ստացվում է մի կատարյալ անհեթեթություն», միանշանակ եզրակացնում է Ա. Աբրահամյանը[23], «Շատ կշեղեինք հոս մեր խնդրեն, եթե Ղազարա խառնակ տեղեկությունը քննել ուզեինք»,—ավելի վաղ նկատել է Հ. Մարկվարտը[24]։

Բ. Ուլուբարյանը նույնպես չի քննում «Ղազարա խառնակ տեղեկությունը», որ չշեղվի իր խնդրից, բայց այդ տեղեկությունը հայտարարում է

---

21 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան. Թիֆլիս, 1904, էջ 18։

22 «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 32։

23 Մեսրոպ Մաշտոց, 1963, էջ 122—123։

24 Հ. Մարկվարտ. Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց ս. Մաշթոցի. Վիեննա, 1913, էջ 58։

«վստահելի», «աներկբայելի» և գտնում, որ Վռամշապուհի գահակալության ժամանակը որոշելու համար «չկան առավել արժանահավատ աղբյուրներ»։

Ի՞նչ է դա, անգոսնում, թե՞ անգիտացում։

«Զրուցարանի» հեղինակը ծանոթ է Ե. Տեր-Մինասյանի և Ա. Աբրահամյանի աշխատանքներին, բայց լռում է, և այդ լռությունը շարունակական է։ Գյուտի թվագրման մասին նա իր հոդվածը առաջին անգամ տպագրում է 1981 թ.։ Նույն թվականին «Պատմա-բանասիրական հանդեսում» հոդված տպագրվեց մեր կողմից «Հայոց գրերի գյուտի թվականը» վերտառությամբ, ուր խոսվում է Ղազար Փարպեցու խառը ժամանակագրության մասին[25], ապա՝ «Մաշտոց» գրքում, 1982 թ.[26]։ Բ. Ուլուբաբյանն իր հոդվածը վերատպում է 1983 թ. և՝ նույն լռությունը։ Երկու տարի անց, 1985 թ. Մխիթարյան գիտնական Պ. Անանյանը հանդես է գալիս նրա հոդվածի առթիվ և նկատում, որ չի կարելի հենվել Ղազար Փարպեցու անճիշտ տեղեկության վրա[27]։ 1988 թ. Բ. Ուլուբաբյանը իր «Զրուցարանի» Բ հատորում զետեղում է հոդվածը և ... նույն լռությունը։

Այդպես։ Միթե զրուցագիրը կարծում է, որ «կատարյալ անհեթեթությունը» կարելի է իմաստավորել լռությամբ։

Լռությա՞մբ։ Ոչ։ Զրուցարանի հեղինակը չի լռում, նա անդրադառնում է Պ. Անանյանին... տողատակում։ «Իմ այս տեսակետի դեմ վերջերս առարկություն է հրապարակել Վենետիկի Մխիթարյան միաբանության վարդապետ, անվանի բանասեր Պ. Անանյանը,—գրում է նա։—Հարգելի գիտնականը, ցավոք, նախորդների ու իր սեփական (նախկին) ուսումնասիրությունների կաղապարները չհաղթահարելով՝ վերստին կարևորություն չի տալիս Կորյունի երկի ամենահիմնական տեղեկությանը՝ որ գրերի գյուտը տեղի է ունեցել Վռամշապուհ թագավորի գահակալության 5-րդ տարում, իսկ Վռամշապուհին էլ թագավոր է կարգել Պարսից արքա Շապուհ Գ-ը՝ գահակալած՝ 383—388 թթ.։ Ընդդիմախոսության մեջ արծարծված մյուս հարցերին ու մանրամասներին կանդրադառնամ պարբերական մամուլում»[28]։

Դժվար է ասել, դիմելու այս բարեկիրթ ձևերը՝ «անվանի բանասեր», «հարգելի գիտնական», «ցավոք» ինչպես են զուգորդվում «կաղապարի» հետ, կաղապա՞րն է մտնում այս բարեկիրթ ձևերի մեջ, թե՞ բարեկիրթ ձևերը՝ կաղապարի, բայց այդ թողնենք։ Ո՞վ ասաց, որ Պ. Անանյանը կարևորություն չի տալիս Վռամշապուհի 5-րդ տարվա տվյալին։ Նա նույնիսկ մի առանձին բաժին է նվիրել դրան «Վռամշապուհի գահակալության տարին» վերտառությամբ, իսկ հոդվածի խորագիրը ինքնին հենց այդ է ասում. «Գրոց գյուտի թվականը և Վռամշապուհ հայոց թագավորի վեցերորդ տարին»։ Նա կարևորություն չի տալիս ոչ թե Վռամշապուհին վերաբերող տվյալին, այլ Ուլուբաբյանի մեկնաբանությանը։ Նա գտնում է, որ Վռամշապուհի գահակալության մասին Ղազար Փարպեցու տեղեկությունը անհավաստի է, որ այն պետք է հաշվել Հազկերտ I-ի երկրորդ տարուց և որ դա կապ չունի Շապուհ Գ-ի հետ։

Իսկ ի՞նչ մյուս հարցեր և մանրամասներ, որոնց խոստանում է անդրադառնալ հեղինակը պարբերական մամուլում։ Մյուս հարցեր չկան և մանավանդ՝ մանրամասներ։ Պ. Անանյանի քննարկած բոլոր հարցերը վերաբերում են մի խնդրի՝ թե ինչպես է կարևորություն տվել Ուլուբաբյանը Վռամշապուհի 5-րդ տարուն և որոշել գյուտի թվականը, և «Զրուցարանի» հեղինակը պարտավոր էր անանջատ անդրադառնալ։ Բայց դա հենց միևնույն լռությունն է, պարբերական մամուլի մասին հրապուրիչ խոստումով։

---

25 «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 64—80։

26 Ա. Մարտիրոսյան. Մաշտոց. Երևան, 1982, էջ 208—209։

27 Տե՛ս Պ. Անանյան. Գրոց գյուտի թվականը և Վռամշապուհ Հայոց թագավորի վեցերորդ տարին.—«Բազմավէպ», 1985, № 1—2, էջ 127—141։

28 Զրուցարան, Բ, էջ 106։

Գուցե «Զրուցարանը» տեղը չէ։ Թերևս։ Բայց միթե մնացածը, որ ասված է, տեղում է ասված։

Գյուտի տարեթիվը զուտ բանասիրական խնդիր է և, հասկանալի է, կարելի է արծարծել կամ՝ պետք է արծարծել գիտական մամուլում։ Բայց Բ. Ուլուբաբյանը երեք անգամ հրապարակում է միևնույն հոդվածը, չնչին տարբերությամբ և ոչ մի անգամ՝ գիտական մամուլում։ «Սովետական դրականություն» ամսագրում լույս է տեսնում «Հաղորդում» ընդհանուր վերտառության տակ, «Սովետական Հայաստան» ամսագրում՝ «Գրերի գյուտի տարեթիվը 393 է» խորագրով, և 393-ը շեշտված, սև, արտահայտիչ թվերով, որ ռեկլամ է հիշեցնում, իսկ երրորդ անգամ՝ «Զրուցարանում»՝ մանուկների համար։ Ուրեմն ի՞նչ. հաղորդում է դա, ռեկլամ, զրույց, թե «քննական պրոպրտում», և ինչո՞ւ է խուսափում գիտական մամուլից։

Բայց միայն լռությամբ չէ որ լռում է հեղինակը։ Կան և ուրիշ միջոցներ։ «Հները... նորերը»,— հեղինակն այսպես լայն ափով է կշռում բանասիրական խնդիրները, և շատ բան մնում է ափի տակ։ Եվ մի տեսակ վերամբարձ հայացք կա հների ու նորերի նկատմամբ. «Հները փորձում էին... իսկ նորերը փորձում են» և նա է բերում ճշմարտությունը։

Եվ ճշմարտությունը ներկայացվում է բոլորովին անճիշտ։ Դնահատելով Մանանդյանին, որ առաջին անգամ կարծիք է հայտնել Կորյունի ժամանակագրական վերջաբանի անվավերության մասին, և ապա՝ դժգոհելով, որ նա հետագայում հրաժարվեց իր կարծիքից, «Զրուցարանի» հեղինակը գրում է. «Սրանից հետո էր, որ մեր մեկ ուրիշ անվանի բանասեր՝ Երվանդ Տեր-Մինասյանը, իր մի ընդարձակ ուսումնասիրության մեջ կրքոտ ընդդիմախոսություն բացեց Մանանդյանի տեսակետի դեմ և, իրավացիորեն քննադատելով նրա հետազոտական աշխատանքի մի քանի անհամոզիչ արդյունքները, հանիրավի մերժեց նաև նրա շատ կարևոր պնդումը՝ գրերի գյուտի ժամանակը որոշելու համար ելակետ ընդունել Կորյունի պատմության բուն նյութը»[29]։

Ստացվում է, որ Ե. Տեր-Մինասյանը Մանանդյանին քննադատում է նրա կարծիքը փոխելու համար և նրա «մի քանի անհամոզիչ արդյունքները» դրան են վերաբերում։ Բայց բոլորովին հակառակը։ Ե. Տեր-Մինասյանը քննադատում է Մանանդյանին նրա նախկին տեսության համար, իսկ որ կարծիքը փոխել է, հենց դա է համարում դրական։ «Մի քանի անհամոզիչ արդյունքները» բացառապես այն փաստարկներն են, որ վերարծարծում է Ուլուբաբյանը և դնում իր տեսության հիմքում, ինչպես օրինակ, Մատենադարանի երեք ձեռագրերի տոմարական նյութերը, Ղազար Փարպեցու՝ Վռամշապուհին վերաբերող ժամանակագրական տվյալը և այլն։ Ահա ինչ է «իրավացիորեն քննադատում» Ե. Տեր-Մինասյանը։

Կարելի է, իհարկե, վերակոչել որևէ մերժված կամ մոռացված տեսություն, եթե ցույց է արվում, որ ճիշտ չի եղել նրա նկատմամբ վերաբերմունքը, բայց հենց այնպես գյուտը V դարից փոխադրել IV դար, մեկ տասնամյակ առաջ. որովհետև դա կարող է ավելի տպավորիչ լինել և արձագանք տալ՝ չի ելնում գիտական շահագրգռություններից։

Կորյունի «Վարք Մաշտոցին» Մաշտոցի կենսագրության և գրերի գյուտի առաջին աղբյուրն է, և չափազանց կարևոր է, թե որքան է այն անխաթար և հավաստի։ Հայագիտության մեջ այդ հարցում, նույնիսկ գերքննադատության շրջանում, որևէ տարակարծություն չի եղել։ Կարելի է բացառել միայն Ի. Ջավախիշվիլուն։

Բ. Ուլուբաբյանն իր վարկածը կառուցել է նույն սկզբունքի վրա, բայց ոչ նույն խնդրով, որ «Վարք Մաշտոցին» ամբողջական չէ, որ իր մեջ հակասություններ կան և օտարամուտ հատված։ Իսկ այդ հատվածը սկզբնաղբյուրի համար անգնահատելի է, դա երկի ժամանակագրական հենքն է։

---

29 Նույն տեղում, էջ 99։

Ահա ինչպիսի թանկ գնով է վճարվում փոքրիկ մի փառասիրություն[30]։

Այժմ գյուտի թվագրումը։

«Եւ արդ լինի համար ամաց հաւատոց երանելւոյն ամք քառասուն և հինգ,— գրում է Կորյունը,— և ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ. որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց և Յազկերտի ամս քսան և մի և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին։

Եւ արդ, առնու համար ամաց սրրոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»[31]։

Երբ պատմագիտության կողմից ընդունված պարսից իշխողների գահակալական տարիները համադրում ենք Կորյունի ժամանակագրական տվյալների հետ, ստացվում են անհարիր թվեր։ Այսպես, Մաշտոցի կրոնավորությունն սկսվել է Վռամ Կրմանի չորրորդ տարուց և տևել 45 տարի մինչև իր մահը։ Վռամ Կրմանը թագավորել է 388—399 թ., նրա չորրորդ տարին 392-ն է, որից 45 տարի հետոն անում է 437։ Բայց Մաշտոցը վախճանվել է Հազկերտ II-ի առաջին տարում, որ ընկնում է 438/9 թ.։ Հայոց դպրությունն սկսվել է Հազկերտ I-ի ութերորդ տարուց և մինչև Մաշտոցի մահը ձգվել 35 տարի։ Հազկերտ I-ը գահակալել է 399թ., նրա ութերորդ տարին անում է 407։ 407-ից երեսունհինգ տարի՝ հանգում է 442-ին և դարձյալ չի համընկնում Հազկերտ II-ի առաջին տարուն և այլն։

Խնդիրն ունի երկու պայման. Կորյունի ժամանակագրական տվյալները և պարսից թագավորների տոմարական ժամանակագրությունը։ Եթե նրանց մեջ ինչ-որ բան ճիշտ չէ, խնդիրը չի կարող լուծման հանգել։

Նախ՝ Կորյունի ժամանակագրությունը։ Կորյունի բնագիրը մեզ է հասել հետագա ընդօրինակությամբ։ Հասկանալի է, մինչ այդ երկար դարեր ձամփորդել է գրչական ուղիներով և կարող էր որևէ տեղ վրիպում տալ կամ տարընթերցում, ինչպես օրինակ Վռամ IV-ի մականունը՝ Դիսմոն փոխ. Կրման։ Բայց այդ սխալը ցույց է տալիս բնագրի վաղեմությունը։ Ճիշտ ձևը գրչի մոտ չի գիտակցվել և նախապես եղել է որ պահպանվել է նրա աղավաղված պատկերը։ Գրեթե բոլոր բանասերները գտնում են, որ բնագրում թագավորների տարիների թվարկման հատվածից՝ թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց և Յազկերտի՝ ամս քսան և մի... տող է ընկած՝ Վռամ V-ի թագավորության ժամանակը։ Հ. Թորոսյանն առաջարկում է վերականգնել այն։ Ն. Ակինյանը Կորյունի քննական բնագրի մեջ ավելացնում է՝ «եւ Վռամայ ամս ԺԲ», իսկ Մ. Աբեղյանը՝ «եւ Վռամայ ութ և տասն», Ն. Բյուղանդացին քաղվածք է բերում լրացնելով՝ «Եւ Վռամայ հինգերորդի ամս քսան», Հ. Մանանդյանը նույնպես՝ «եւ Վռամայ ամս ի», Պ. Անանյանը՝ «Եւ Վռամայ քսան և մի»։ Բնագրին չի միջամտում միայն Գ. Ֆնտեգլյանը։ Բանասերները կարծում են, որ Կորյունի կողմից Վռամ Կրմանի և Հազկերտ I-ի գահակալության տարիների հիշատակումը Մաշտոցի կրոնավորության հաշվի մեջ են մտնում. և ամբողջության համար պակասում են Վռամ V-ի տարիները։ Բայց դա այդպես չէ։ Կորյունը գրում է. «Եւ արդ լինի համար ամաց հաւատոց երանելւոյն ամք քառասուն և հինգ և ի դպրութենէն

30 «Հանդէս Ամսօրյա»-ի 1983 տարվան 7—12 թիվին մեջ հարդ. բանասեր Մարտիրոս Մինասյան ստորագրած է «Կորյունի գրքի ամս երկուս և վերջարանը» վերնագրով հոդվածը, ուր ետ արձագանք հանդիսանալու հայրենի բանասեր պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի՝ Սովետական Հայաստան ամսագրին մեջ հրատարակած «Հայոց գրերի գյուտի տարեթիվը 393-ին է» հանրամատչելի հոդվածին, ինքն ալ իր կարգին երկու հատվածներ Կորյունի բնագրեն դուրս կհանե իբրև եկամուտ տարրեր»,— գրում է Պ. Անանյանը («Բազմավեպ», 1985, № 1—2, էջ 127)։ Եվ հենց դա է նրան առիթ տվել քննադատությամբ հանդես գալու «հանրամատչելի հոդվածին» դեմ։

31 Կորյուն, էջ 98, 100։

Հայոց մինչև յվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս։ Որք (որոնք), այսինքն՝ կրոնավարությունը և գրերի գյուտը՝ դպրությունը։ Առաջինը համարվում է (հաշվվում է) Վռամ Կրմանի չորրորդ տարուց, երկրորդը՝ Հազկերտ I-ի ութերորդ տարուց, մինչև Մաշտոցի մահը՝ Հազկերտ II-ի առաջին տարին։ Վռամ Կրմանի և Հազկերտ I-ի թագավորության տարիները ելակետային են, ելակետային է և Հազկերտ II-ի առաջին տարին, իսկ Վռամ V-ի հետ ոչինչ չի կապված։

Ահա թե ինչու Կորյունը տալիս է Վռամ Կրմանի և Հազկերտ I-ի ժամանակները, ինչպես և՝ Հազկերտ II-ի առաջին տարին, իսկ Վռամ V-ին ողում է։ Կորյունի ժամանակագրական վերջարանից տող չի ընկած և որևէ փոփոխություն կամ լրացում անտեղի է։

Այժմ փորձենք տոմարական տեսք տալ Կորյունի ժամանակագրությանը, ելակետ ունենալով նախապես հայտնի և հավաստի մի տվյալ. Մաշտոցի մահվան թվականը։ Մաշտոցը մահացել է 440 թ. փետրվարի 17-ին, Հազկերտ II-ի առաջին տարում, իսկ Հազկերտ II-ի առաջին տարին սկսվում է 439 թ. օգոստոսի 9-ից։ Մաշտոցի կրոնավարության տարիների հաշիվը 45 է։ Մաշտոցի մահից եթե 45 տարի առաջ գնանք կհանգենք 395-ի, որ Վռամ Կրմանի չորրորդ տարին է։ Այդպես մենք ստանում ենք և մյուս իշխողների թվերը. Հազկերտ I՝ 397—418, Վռամ Գոռ V՝ 418—439։ Իսկ Հազկերտ II-ի առաջին տարին արդեն հայտնի է։

Ստացված արդյունքը փորձենք համադրել պատմագիտության մեջ ընդունված արքայացանկի հետ, որ կազմել է Թ. Նյոլդեքեն։ Այն կստանա այսպիսի տեսք։

Ըստ Կորյունի	Ըստ Նյոլդեքեի
Վռամ Կրման IV. 391—397	Վռամ Կրման IV. 388—399
Հազկերտ I. 397—418	Հազկերտ I. 399—420
Վռամ Գոռ V. 418—439	Վռամ Գոռ V. 420—438/9
Հազկերտ II. 439	Հազկերտ II. 438/9—457

Շեղումը բավականաչափ մեծ է սկզբում, իսկ ապա՝ մեկ-երկու տարով։

Պարսից արքաների ճիշտ ժամանակագրության համար խանգարում է նրանց գահակալության հաշվումը շարժական տարվա առաջին ամսից, երբ էլ որ այն տեղի ունեցած լինի։ Այդ մասին մենք առիթ ունեցանք խոսելու։ Ահա թե ինչու Թ. Նյոլդեքեն գահակալների ցանկը տալիս է երկու թվով. իրական և պայմանական։ Մինչև VI դար նա ցանկի մեջ իրական թվեր չի նշում։ Այդ նշանակում է, որ մինչև VI դար պարսից իշխողների ժամանակագրությունը մոտավոր է։ Բացի այդ, հաջորդ գահակալը բարձրանալով իշխանության, պաշտոնական տիտղոսներում չի ջնջում նախորդի անունը։ Նախորդը նորի հետ դեռ շարունակում է իշխել շուրջ երկու տարի։ Դա ժառանգավորման իրավունքն է հավաստում և. անշուշտ, լավ է բարոյական և իրավական տեսակետից, բայց խանդարում է ճիշտ թվագրմանը։

Թ. Նյոլդեքեն իր ցանկը կազմել է 1874 թ., հենվելով X դարի արաբ պատմիչ Թաբարիի և այլ միջնադարյան աղբյուրների վրա և բոլորովին ապահով չէ վրիպումից։ Կորյունը V դարի պատմիչ է, ժամանակակից, և զարմանալիորեն գրեթե միշտ առաջնություն է տրվում Նյոլդեքեի արդյունքներին և ոչ թե աղբյուրին։

Տեսնենք, թե ինչ հարաբերություն կա Կորյունի և Նյոլդեքեի ժամանակագրական համակարգերի միջև։

Վռամ Կրմանին Նյոլդեքեի ցանկում տրված է տասնմեկ տարի, իսկ Կորյունի մոտ՝ վեց։ Բանաստեղծները վեցի փոխարեն առաջարկում են կարդալ՝ տաս և համապատասխանաբար փոխում են մյուս թվերը։ Հ. Աճառյանը գտնում է, որ Կորյունը վեցը մտցրել է հավատի տարիների մեջ, իսկ երբ

ասում է, որ Կրմանի չորրորդ տարում սկսվեց Մաշտոցի կրոնավարությունը, ապա ամբողջանում է Կրմանի գահակալության շրջանը՝ տասը։

Բայց դրանով չի վերանում անհամաձայնությունը երկու ցանկերի միջև, քանի որ Թարարին տալիս է 11 և ոչ թե 10, և հետո՝ վեցի և չորսի գումարումն արհեստական է, Կորյունի ժամանակագրակարգի համաձայն Վռամ Կրմանի չորրորդ տարում սկսվել է Մաշտոցի կրոնավարությունը, իսկ Հազկերտի ութերորդ տարում եղել է գրերի գյուտը։ Առաջինը տևել է 45 տարի, երկրորդը՝ 35։ Ուրեմն կրոնավարությունից գրերի գյուտ կազմում է 10 տարվա շրջան։ Վռամ Կրմանի չորրորդ տարուց 10 տարին հանգում է նույն կետին, ինչ Հազկերտ I-ի ութերորդ տարին։ Նշանակում է Վռամ Կրմանն անպատճառ վեց տարի է թագավորել, քանի որ այդ դեպքում միայն նման համապատասխանություն կարող է ստացվել։ Դա լավագույն ապացույց է, որ Կորյունը Վռամ Կրմանի թագավորության տարիները գիտի վեց, ինչպիսին էլ այն լինի։ Եվ ճիշտ է Կորյունը։

Թարարին մեզ հետաքրքրող հատվածում տալիս է Պարսից թագավորների այսպիսի հաջորդականություն։

Որմիզդ II
Շապուհ II
Արտաշիր II
Շապուհ III
Վռամ IV

Մի փոքր շեղվում է VII դարի հայ Անանուն ժամանակագիրը։

Որմիզդ Շապուհեան
Շապուհ Որմիզդեան
Արտաշիր ի Շապուհեան
Վռամ յԱրտաշրեան[32]

Թվարկման ձևից երևում է, որ Անանուն ժամանակագիրը ձեռքի տակ ունեցել է հնագույն պարսկական աղբյուր։

Անանունի ցանկից բաց է թողնված Շապուհ III-ը։ Շապուհ III չգիտեն և մեր մյուս հայ պատմիչները՝ Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, որ զալիս է պարսից պատմական ավանդույթից։ Դա կարելի է բացատրել։

Շապուհ II երկարակյացը իր տևական և եռանդուն գործունեությամբ խոր հետք է թողել պատմական հիշողության մեջ և դուրս վանել իր անվանակցին, ավելի ճիշտ՝ ներձուլել իրեն։ Շապուհ II-ը, սակայն, ներձուլել է Շապուհ III-ին անվամբ և ոչ՝ ժամանակագրորեն։ Նրանց միջև ընկած է Արտաշիր II-ը, որ գահակալել է չորս տարի, ինչպես գիտեն և՛ Թարարին, և՛ Անանունը, և՛ Խորենացին։ Արտաշիրը իր տեղում է իր չորս տարիներով, իսկ Շապուհ III-ի ժամանակը մնացել է բաց։ Հաջորդը զալիս է Վռամ Կրմանը։ Շապուհ III-ը իշխել է հինգ տարի, Վռամ Կրմանը՝ վեց, և ահա Շապուհ III-ի հինգ տարին անցնում է Վռամ Կրմանին և ստացվում է տասնմեկ։ Այդպես է առաջացել Վռամ Կրմանի տասնմեկ տարին։ Հետագայում Թարարին Շապուհ III-ին վերականգնում է իր տեղում, բայց Կրմանի ժամանակը թողնում է նույնը՝ տասնմեկ տարի։

Այժմ ելակետային երկրորդ թիվը։

Ֆ. Յուստին և Ք. Պատկանյանը Հազկերտ I-ի գահակալության սկիզբը թվագրում են 397, Թ. Նյոլդեքեն՝ 399։ Նա հենվում է Սելևկիա-Տիզբոնի մի ժողովի արձանագրության վրա։ Բայց նույնչափ հիմքեր կան ընդունելու, որ Հազկերտ I-ը գահակալել է 397-ին։ Հազկերտ I-ին հաջորդել է Վռամ Գոռ V-ը։ Բերենք նրա գահակալության առաջին տարվա մասին ժամանակագրական մի տեղեկություն. «Ալեքսանդրի 732 թվականին, որ է Պարսից

32 Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յորինեալ է դարու ի հնագոյն ժամանակագրաց. Վենետիկ, 1904, էջ 30։

թագավոր Վռամի երկրորդ տարին, տեղի ունեցավ սուրբ Հակոբի նահատակությունը»,— ասված է ս. Յակոբի վարքում[33]։

Ալեքսանդրի 732-ը մեր 420-ն է։ Սուրբ Հակոբի նահատակությունը տեղի է ունեցել 420 թ., որ Վռամ Գոռի կամ Վռամ V-ի երկրորդ տարին է։ Ընշանակում է Վռամը գահակալել է 418 թ.։ Կորյունը, Խորենացին, Անանուն ժամանակագիրը, Սեբեոսը, Թաբարին և ուրիշ հայտնի բոլոր աղբյուրները Հազկերտ I-ին տալիս են քսանմեկ տարի։ Ուրեմն նրա գահակալությունը պետք է ավարտվի 418 թ.։ Եվ եթե 418-ից քսանմեկ տարով առաջ գանք, կստացվի 397՝ Հազկերտի առաջին տարին։

Իսկ երրորդ ելակետը՝ Հազկերտ II-ի առաջին տարին մենք արդեն գիտենք՝ 439։

Մնում է արտածել գրերի գյուտի կամ հայոց գպրության ճիշտ ժամանակը։

Հազկերտի ութերորդ տարին անում է 405 (397+8), Մաշտոցի կրոնավորությունից տաս տարի հետո՝ 405 (395+10) և եթե Մաշտոցի մահից 35 տարի առաջ գնանք, դարձյալ հանգում ենք 405-ի (440—35)։

Գրերի գյուտի թվականը 405-ն է։

Կորյունի ժամանակագրական վերջաբանը ոչ միայն հստակորեն տալիս է գյուտի տարեթիվը, այլև կարևորագույն աղբյուր է, որով հնարավոր է դառնում ուղղումներ մտցնել պարսից գահակալների ժամանակագրական ցանկում։

РУДИМЕНТ ОДНОЙ ГИПОТЕЗЫ И ДАТА ИЗОБРЕТЕНИЯ АРМЯНСКОГО АЛФАВИТА

Доктор филол. наук. А. А. МАРТИРОСЯН

Резюме

В 1925 г. Н. Адонц в одной из статей высказал мысль о том, что изобретение армянских письмен произошло не в 400-х годах, а между 383 и 392 годами. Это мнение разделил А. Манандян. Новая гипотеза подверглась серьезной критике. Впоследствии ее авторы пересмотрели свои взгляды. Но в 1981 г. непонятно почему эту гипотезу вновь выдвигает, причем от своего имени, Б. Улубабян. Возрождение отвергнутой гипотезы основано на столь ложных аргументах и заявлениях и так далеко от соблюдения научной добросовестности и этики, что не может стать предметом серьезного обсуждения. Между тем автор уже третий раз выступает на страницах массовой периодической печати, создавая путаницу в этом вопросе. В статье показано, как Б. Улубабян пытается обосновать свой ложный тезис при помощи антинаучных методов.

---

33 P. Bedjan. Acta martyrum et sanctorum. T II, Parisus, 1891, p. 539.